

## ՈՒԵՖԱ-Ի ԱԿՈՒՄՔՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄԸ ԻՍԼԱՆԴԻԱՅՈՒՄ



ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման համակարգը առաջին անգամ Իսլանդիայում ներկայացվել է 2001 թ.-ին, և արտոնագրման շրջանը սկսվել է 2002 թ.-ի նոյեմբերի 15-ին: Այսպիսով, ակումբների արտոնագրման առաջին մրցաշրջանը սկսվել է 2003թ.-ի ամռանը (Իսլանդիան ունի ամառային մրցաշրջան, որը սկսվում է մայիսի սկզբին և ավարտվում սեպտեմբերի վերջին):

Մենք ունենք արտոնագրման մեկ համակարգ, այնպես որ բարձրագույն խմբում հանդես գալու դիմում ներկայացրած ակումբները միաժամանակ դիմում են նաև ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցելու արտոնագիր ստանալու համար: Առաջին խմբի թիմերը նույնպես անցնում են այս համակարգով, սակայն համեմատաբար մեղմ չափանիշներով: Այս երկու խմբերում թիմերի ընդհանուր քանակը 24-ն է, յուրաքանչյուր խմբում 12 թիմ:

Սկզբում արտոնագրման համակարգը թերահավատորեն ընդունվեց մեր ակումբների կողմից: Սա հասկանալի էր, քանի որ արտոնագրում ստանալու համար պայմանները շատ ծանր էին, հատկապես երբ հաշվի էր առնվում այն փաստը, որ իսլանդական ակումբները շատ ավելի փոքր են՝ եվրոպական այլ երկրների ակումբների հետ համեմատ: Արտոնագրման համակարգի հետ սկզբնական ծանոթությունից և փորձի ավելացումից հետո ակումբներն ու համակարգը զգալիորեն աճել են: Ակումբների արտոնագրման նպատակը ակումբներին իրենց կազմակերպվածության յուրաքանչյուր բնագավառում ամեն կերպ օգնելն էր: Այստեղ գլխավոր բառը “օգնել”-ն է, որը նշանակում է, որ արտոնագրման համակարգը ոչ միայն ակումբների կառավարման միջոց է, այլ և արդյունավետ գործիք՝ նրանց համընդհանուր զարգացման գործին աջակցելու համար: Ժամանակի ընթացքում ակումբներն աստիճանաբար ընդունեցին համակարգը և այժմ այն համարում են տարեկան աշխատանքի անբաժանելի և կարևոր մաս: Ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարության կողմից համակարգի նկատմամբ նվիրվածությունն երաշխավորելու համար կարևոր տարր էր խորհրդի (գործադիր կոմիտեի) անդամին որպես Առաջին Ատյանի Մարմնի նախագահ նշանակելը: Սա երաշխավորում է մասնակցությունը խորհուրդի նիստերին, որտեղ արտոնագրումը քննարկումների մշտական թեմա է:

Հասարակությունը տեղյակ է արտոնագրման համակարգի առկայության մասին, և այն համարում է որակյալ համակարգ, որը զգալիորեն բարձրացրել է ակումբների որակը: ՋԼՄ-երը հետաքրքրված են, հատկապես տարվա այն ժամանակ, երբ Առաջին Ատյանի Մարմինը քննարկում է ակումբների դիմումները և որոշում կայացնում արտոնագրերի շնորհման վերաբերյալ: Նրանց հետաքրքրում է նաև, թե որ թիմերը կենթարկվեն պատժամիջոցների, չնայած մինչ այժմ մերժման դեպք չի եղել: Այնուամենայնիվ, դա դեռ կարող է լինել: Ակումբները կանոնաբար զգուշացվում են չդառնալ ինքնագոհ...

Կարծում եմ հենց սկզբից էլ ֆուտբոլի ֆեդերացիան և ակումբները գիտակցեցին, որ հիմնական դժվարությունները կլինեն երկուսը. Ենթակառուցվածքը և ամբողջությամբ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշիվները:

Շատ քիչ թիվեր էին իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները ամբողջապես ենթարկում աուդիտի, այնպես որ ցանկալի արդյունքի հասնելու համար պահանջվեց մի քանի տարի, բայց մենք շատ խիստ էինք այս չափանիշի բավարարման առումով, և ակումբները կատարեցին անհրաժեշտ քայլեր այն բավարարելու ուղղությամբ: 2004թ.-ից սկսած՝ սա արդեն խնդիր չէր, սակայն այն ակումբները որոնք նախկինում չէին արտոնագրվել, կամ համակարգ մտնող նոր ակումբները որոշակի բարդությունների էին հանդիպում: Առաջին անգամ համակարգ մտնող ցանկացած ակումբ ստանում է մեկ տարի ժամկետ՝ հարմարվելու համար, նրանք կարող են կատարել սխալներ և սովորել դրանցից այդ մեկ տարվա ընթացքում: Ֆուտբոլային ակումբների ֆինանսների նկատմամբ հավատը, հարգանքը և վստահելիությունը շատ բարձր է և չափանիշ է մյուս մարզաձևերի համար: Մենք այս ասպարեզում հասել ենք շատ բարձր մակարդակի, սակայն Չեմպիոնների և Եվրոպայի Լիգաներում մասնակցելու իրավունք ստացած ակումբների համար դա արդեն այլ խնդիր է, երբ գործածության մեջ է մտնում Ֆինանսական արդար խաղի կանոնակարգը: Ոչ վնասաբերության կանոնը (break-even) չի վերաբերում մեր ակումբներին, բայց ՌԻԵՖԱ-ի խմբային մրցաշարերին մասնակցելու պարագայում յուրաքանչյուր ակումբ միանշանակ կանցնի իր ֆինանսական սահմանագիծը:

Ենթակառուցվածքային չափանիշի բավարարումը տևել է ավելի երկար: Հանդիսատեսի համար պայմանները 2002թ.-ին լավը չէին՝ մեկ կամ երկու տրիբունա, իսկ ՋԼՄ-ների համար հարմարությունները վատն էին: Այս ասպարեզում մենք մեծ քայլեր ենք կատարել և դա մեծամասամբ ակումբների արտոնագրման համակարգի ճնշումների շնորհիվ: Մինչև 2012թ.-ի մրցաշրջանը, բարձրագույն խմբում հանդես եկող թիմերը հանդես կգան հանդիսատեսի և ՋԼՄ-ների համար առաջնակարգ պայմաններ ունեցող մարզադաշտերում: Առաջին խմբի թիմերը հանդես կգան հանդիսատեսի համար լավ պայմաններ ունեցող մարզադաշտերում: Մեր թիմերից շատերի համար մարզադաշտերի մեծ մասի համայնքային սեփականություն լինելը մեծ դժվարություն էր ներկայացնում, սակայն Ֆուտբոլի ֆեդերացիայի աջակցությամբ (այդ թվում նաև ֆինանսական) ամեն ինչ լավ է ընթանում: 2000թ.-ից սկսած, արտոնագրված 30 ակումբներից միայն 5-ն էին, որ ունեին հանդիսատեսի համար որևէ պայմաններ: 2010թ.-ին 19 ակումբներ տեղադրել են հարմարություններ հանդիսատեսի համար, իսկ առաջին հինգ թիմերը մեծացրել են իրենց մարզադաշտերը: 2012թ.-ին բոլոր 30 ակումբներն էլ հանդես կգան համապատասխան կանոնակարգի ենթակառուցվածքային չափանիշները բավարարող մարզադաշտերում: Կլինեն բարձրակարգ հարմարություններ հանդիսատեսի համար:

Այժմ մենք պետք է նայենք դեպի ապագան և որոշենք մեր հետագա քայլերը, կլինեն դրանք ակումբների արտոնագրման համակարգի շրջանակներում, թե դրանում մեր տարած ծավալուն աշխատանքների հիման վրա: Խնդիրը, որի հետ մենք երկար ժամանակ առնչվել ենք Իսլանդիայում, այն է, որ մենք Եվրոպայում ունենք ամենակարճ տևող մրցաշրջանը: Սրա պատճառը ցերեկային լույսի պակասն է՝ կապված երկրի աշխարհագրական դիրքի հետ: Եթե մենք ցանկանում ենք երկարացնել մրցաշրջանը, ապա պետք է լրջորեն մտածենք երկու խնդրի շուրջ: Առաջին հերթին խաղադաշտերը: Ինչպես կարող ենք դրանք նախապատրաստել ավելի վաղ՝ գարնանը և օգտագործել մինչև ուշ աշուն: Սրա ակնհայտ լուծումը կլինի արհեստական խոտածածկը, սակայն ոչ բոլորն են համաձայն դրա հետ: Եվ երկրորդ, անհրաժեշտ է տեղադրել լուսարձակներ: Ներկայումս բավականին մարզադաշտեր ունեն լուսարձակներ: Չնայած ձմռան մարզումների համար նախատեված արհեստական խոտածածկով խաղադաշտերը համալրված են լուսարձակներով, սակայն հիմնական մարզադաշտերից շատերը չունեն լուսարձակներ, քանի որ դրանք օգտագործվում են միայն ամռանը, երբ քիչ թե շատ, թե ցերեկը, թե գիշերը առկա է բնական լույս:

Ես չեմ կասկածում, որ ակումբների արտոնագրման համակարգը մեծ ազդեցություն է թողել Իսլանդիայի ֆուտբոլային հասարակության վրա և մենք ամենուր տեսնում ենք բարելավումներ: Ի սկզբանե

արտոնագրմանը մասնակցած ակումբները բավականին հաստատված են համակարգի մեջ և հարգանքով են վերաբերվում նրան: Համակարգ նոր մուտք գործող ակումբները պատրաստ են դիմակայել դժվարություններին, որովհետև նրանք զգում են, որ արտոնագրված ակումբներով համայրված լիգա մուտք գործելուց հետո նրանք որակապես բարձր մակարդակի վրա են գտնվում և ցանկանում են մնալ այդ մակարդակի վրա: Արտոնագրված թիմերի մրցաշարից դուրս մնացած ակումբները նույնիսկ ցանկություն են հայտնում մնալ արտոնագրման համակարգում: Այսպիսով, սա ֆուտբոլային ակումբների համար որակի համակարգ է և չափանիշ, որին պետք է ձգտեն բոլոր ակումբները:

Միանշանակ է, որ ակումբների արտոնագրման համակարգը գտնվում է կայուն հիմքերի վրա:

*Օմար Մմարասան*  
Իսլանդիայի ՖՖ  
Մարկետինգի մենեջեր  
Ակումբների արտոնագրման մենեջեր  
Մամուլի քարտուղար